ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՁԱՐՈՒՅԺՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 11 - 12 (16814) ՇԱԲԱԹ 8 ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԳԼԽԱՎՈՐԸ ՀԱՀ-Ի ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄՆ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ»

Փետրվարի 6-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Խոսելով գործադիր իշխանության նիստի օրակարգի մասին՝ վարչապետը նշեց, որ քննարկման է դրված նաեւ հավելյալ արժեքի հարկի (ՀԱՀ) օրենսդրական փոփոխությունը, ինչը նախատեսում է երկրում գործող սկզբունքների համապատասխանեցումը եվրոպական սկզբունքներին: Վարչապետի խոսքով, ֆինանսների նախարարության կողմից ներկայացված օրինանախագիծը նախատեսում է ՀԱՀ-ի երկրում գործող մենեջմենտը վերածել եվրոպական մոդելի: Վարչապետի հավաստմամբ, այդ ոլորտում իրականացվող բարեփոխումը եւ ծրագրված օրենսդրական փոփոխությունները կնպաստեն գործարարության զարգացմա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ Է ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՆՈՒՄ Է ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԳԾՈՎ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Հունվարի 31-ից փետրվարի 5-ը աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը: Գլխավոր հանձնակատարը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի ուղեկցությամբ, հանդիպումներ ունեցավ Վրաստանի պաշտոնատար անձանց հետ, եղավ Թբիլիսիի հայկական կրթամշակութային օջախներում, այցելեց Ախալցիխե, Ախալքալաքի, Նինոծմինդա, հանդիպումներ ունեցավ տեղի հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Զարեհ Սինանյանին այցի ընթացքում ուղեկցում էր գլխավոր հանձնակատարի գրասենյակի համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական բաժնի պետ Հայկ Ենգիբարյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թբիլիսիում փետրվարի 3-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող, Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի հետ:

Հանդիպմանը Քեթեւան Ցիխելաշվիլին Զարեհ Սինանյանին ներկայացրեց քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆ Է, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ՇԱՏ ՀՊԱՐՏ ԵՆՔ»

Փետրվարի 6-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Օրբելիանիների պալատում հանդիպում ունեցավ կրոնական միավորումների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը, ներկա էին կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն, փոխնախագահ Գիորգի Ուկլեբա, ռազմավարական հետազոտությունների, վերլուծության եւ տարածաշրջանային ծառայության պետ Նինո Ճավճավաձեն, երկրում գործող 11 տարբեր դավանանքների ներկայացուցիչներ, այդ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ տարվա նոյեմբերին, խորհրդարանի կողմից միայն համամասնական ընտրակարգով 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների մասին օրինանախագծի տապալումից հետո, «Վրացական երազանք» կառավարող կուսակցության եւ միացյալ ընդդիմության միջեւ անցկացվում են հանդիպումներ ընտրահամակարգի սահմանման հարցով:

Ընդդիմության կողմից առաջադրված այսպես կոչված «գերմանական մոդելին», «Վրացական երազանքը» հակադրեց խառը՝ 50 մեծամասնական եւ 100 համամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման տարբերակը:

Միացյալ ընդդիմությունն իր առաջարկության միջազգային հանրության աջակցությունն ապահովելու նպատակով, այսպես կոչված «գերմանական մոդելի» տարբերակի գնահատման համար ուղարկել

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԿՈՆԳՐԵՍԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն եւ արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին աշխատանքային այցով գտնվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այցի գլխավոր նպատակը Վրաստանի վարչապետին ամերիկյան առանձին կոնգրեսականների եւ սենատորների կողմից հասցեագրված նամակում ներառված դիտողությունների պարզաբանումն էր:

- Երբ բարեկամներն ունեն հարցեր, բնական քայլ է, որ հանդիպես նրանց, բացատրես, փոխանցես փաստարկներ եւ ցույց տաս, թե որոնք են ապագայի քո ծրագրերը, ինչ քայլեր ես պատրաստվում ձեռնարկել,- հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն ԱՄՆ-ի կոնգրեսում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՄՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆՁՆԵՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ

Հունվարի 31-ին Վրաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Քելլի Դեգնանը իր հավատարմագրերը փոխանցեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլուն:



Մինչ այդ, Քելլի Դեգնանը հավատարմագրերը փոխանցեց նաեւ Վրաստանի ԱԳ նախարար Դավիթ Զալկալիանուն:

Արարողության ավարտից հետո, նորանշանակ դեսպանը հայտարարեց, որ ԱՄՆ-ը կշարունակի օգնել Վրաստանին՝ Արեւմուտքին ինտեգրմանը, Ռուսաստանի կողմից իրականացված ապակայունացմանն ուղղված գործողությունների դիմակայմանը:

Նրա խոսքով, ինքը կաշխատի Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների հզորացման ուղղությամբ:

Նշենք, որ դեսպանի պարտականությունները պաշտոնապես ստանձնելուց հետո, Քելլի Դեգնանը հանդիպումներ ունեցավ Վրաստանի ներքին գործերի նախարար, Վախթանգ Գոմելաուրու, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԳԼԽԱՎՈՐԸ ՀԱՀ-Ի ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԾՈՒՄՆ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը, առավել կընդլայնեն Եվրամիության հետ խոր ու ընդլայնված ազատ առեւտրի մասին պայմանագրով նախատեսված հեռանկարները:

- Բնականաբար, դա կնպաստի գործարարության, առաջին հերթին, միջին գործարարության զարգացմանը, որը կկարողանա պայմանագրով առավել մեծ պարտավորություններ ստանձնել ու լրիվությամբ օգտագործել Եվրամիության հետ խոր եւ համընդգրկուն ազատ առեւտրի պայմանագրով ընձեռած հնարավորությունները,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետ Գիորգի Գախարիան նշեց, որ մարդու իրավունքների պաշտպանությունը միշտ եղել է գործադիր իշխանության առաջնահերթությունը: Հետեւաբար, ընթացիկ տարին կառավարությունը սկսում է մարդու իրավունքների երկարաժամկետ ռազմավարության նոր փուլի մշակմամբ: Վարչապետի հավաստմամբ, այդ ռազմավարության մշակման գործընթացում կառավարությունը կօգտագործի բոլոր հնարավոր հարթակները, ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ երկրից դուրս:

- Ինչպես գիտեք, 2012 թվականից մարդու իրավունքների թեման առաջնահերթային է եղել մեր կառավարության համար, եւ 2013 թվականից այն ժամանակվա վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հանձնարարությամբ, սկսվեց մարդու իրավունքների երկարաժամկետ ռազմավարության մշակումը: Այն հաջողությամբ իրականացվեց եւ երկրի տարբեր ոլորտներում իրականացվող բոլոր փոփոխություններին մարդու իրավունքների ռազմավարությունը լրիվությամբ հաշվի էր առնվում: Այս տարի սկսում ենք այդ ռազմավարության նոր փուլի իրականացումը, որը արտակարգ նշանակալից է,- հայտարարեց վարչապետը եւ շահագրգիռ բոլոր կողմերին կոչ արեց իրենց իրավասության շրջանակներում ակտիվ մասնակցություն ցուցաբերել նոր ռազմավարության մշակման գործում:

Կառավարության նիստում վարչապետն անդրադարձավ նաեւ մինչեւ 2008 թվականը սկսված, սակայն դեռեւս չավարտված շինարարությունների հարցին եւ հայտարարեց, որ այդ շինարարությունների համար նպաստները կշարունակվեն մինչեւ 2026 թվականը:

- Հիշեցնեմ՝ 2015 թվականին Վրաստանի կառավարությունը որոշում է կայացրել մինչեւ 2008 թվականը սկսված եւ չավարտված շինարարությունների աջակցության վերաբերյալ: Մենք որոշում ենք կայացրել այս ծրագիրը երկարաձգել մինչեւ 2026 թվականը: Սա շատ արդյունավետ ծրագիր է,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Վարչապետն իր խոսքում հիշատակեց եւս մի նոր նախաձեռնություն, ըստ որի, բռնի տեղահանված անձինք, որոնք ունեն մինչեւ 5 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, ազատվում են գույքահարկից:

- Սա չնչին օգնություն է, սակայն աջակցություն է մեր փախստականներին, որոնք զբաղված են գյուղատնտեսությամբ,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Նա խոսեց նաեւ աշխատանքային տեսչություն ստեղծելու հարցում կառավարության մտադրության մասին: Նրա խոսքով, կառավարությունը խորհրդարանի գարնանային նստաշրջանին կներկայացնի օրինանախագիծ այդ մասին: Ճիշտ է, աշխատանքի տեսչության ստեղծման հատուկ ամսաթիվ նշված չէ, սակայն վարչապետի պարզաբանմամբ, աշխատանքի տեսչությունը լինելու է՝ բռնազավթված տարածքներից բռնի տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերով նախարարության ենթակայության ներքո գտնվող իրավաբանական անձ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆ Է, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ՇԱՏ ՀՊԱՐՏ ԵՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թվում՝ Վիրահայոց թեմի Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հայր Հուսիկ քահանա Հարությունյանը:

Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպմանը առանձնակի ընդգծեց Վրաստանում տիրող հանդուրժողականության մթնոլորտը եւ հայտարարեց, որ ներկայումս առանձնակի նշանակություն ունի ազգային տարբեր պատկանելության եւ դավանանքների մարդկանց միասնությունը, ինչը երկրի առջեւ ծառացած մարտահրավերների դիմակայության նախադրյալն է: Նախագահն ընդգծեց տարբեր կրոնական միավորումների խաղաղ գոյակցությունն ու վրացական հանդուրժողականությունը:

Ինչպես նշել է նախագահը, Վրաստանի բնակչության մեծ մասը ուղղափառ է, սակայն Վրաստանում յուրաքանչյուր կրոն ունի իր տեղը, ազատությունը եւ փոխկապակցվածությունը, ինչը եզակի է դարձնում Վրաստանը:

- Վրաստանի բնակչության համար հանդուրժողականությունը ինքնության մասն է, որի համար մենք շատ հպարտ ենք: Կարեւոր է, որ մենք ունենք այնպիսի հարաբերություններ, որոնք ներառում են հարգանք եւ բարեկամություն: Հարաբերություն, որը խաղաղություն է բերում երկրին ու հասարակությանը: Այս խաղաղությունն այսօր առավել անհրաժեշտ է, քանի որ նկատում ենք հասարակության մեջ՝ լարվածության, առճակատման, բեւեռացման եւ ատելության լեզվի միտումներ: Մենք ապրում ենք մի երկրում, որի մի մասը բռնազավթված է, եւ մենք իրավունք չունենք ունենալ որեւէ տարաձայնություն երկրի ներսում,- ասաց նախագահը:

Հանդիպմանը ելույթ ունեցան նաեւ Վրաստանի պատրիարքության մամլո կենտրոնի ղեկավար վարդապետ Անդրիա Ջաղմահիձեին, Արեւմտյան Վրաստանի մուֆթ Հաջի Ադամ Շանթաձեն:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԿՈՆԳՐԵՍԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցկացված հանդիպումից հետո:

Արչիլ Թալակվաձեի խոսքով, ԱՄՆ կոնգրեսը Վրաստանի նկատմամբ ունի վստահություն, աջակցություն եւ օպտիմիզմ: Նրա հայտարարությամբ, երկու երկրների գործընկերային հարաբերություններին որեւէ բան չի սպառնում:

Իրենց հերթին, ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ջիմ Ռիշը եւ Եվրոպայի ու տարածաշրջանային անվտանգության ենթակոմիտեի անդամ Ջին Շահինը հայտարարեցին, որ հանդիպման ժամանակ զրուցել են իրենց կողմից Վրաստանի վարչապետին ուղարկած նամակի մասին, որում սենատորները մտահոգություն են հայտնել Վրաստանում ժողովրդավարության թուլացման մասին: Նրանց խոսքով, հանդիպմանը քննարկվել են երկու երկրների գործընկերությանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ Վրաստանի նվիրվածությանը ժողովրդավարության եւ լավ կառավարման հանդեպ:

- Մենք երկար ժամանակ աջակցում ենք Վրաստանում ժողովրդավարության զարգացմանը, եւ այդ աջակցությունը երկկուսակցական է: 2012 թվականին մենք մասնակցել ենք Վրաստանի պատմական ընտրություններին՝ որպես միջազգային դիտորդներ, եւ ողջունել ենք այդ առաջընթացը,- հայտարարել են ամերիկյան օրենսդիրներն ու հավելել, որ ժողովրդավարությունը պահանջում է երկարատեւ ջանքեր, եւ Վրաստանը այդ գործընթացում բախվում է Ռուսաստանի կողմից մարտահրավերի:

- Կոչ ենք անում վարչապետ Գախարիային եւ Վրաստանի կառավարությանը կատարել ստանձնած պարտավորություններն ու ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները, նպաստել դատարանի անկախությանը, առաջ քաշել խոստացված ընտրական բարեփոխումները եւ հարգել քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը,- նշել են օրենսդիրները:

Վրաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Դավիթ Զալկալիանին Կրոնական ազատության դաշինքի անդամ երկրների 10 արտաքին գործերի նախարարների հետ մասնակցել է բարձր մակարդակի հանդիպմանը, որը Վաշինգտոնում կայացել է ԱՄՆ պետական քարտուղար Մայք Փոմփեոյի հրավերով: Կրոնական ազատության հարցերի մասին խոսելիս՝ Դավիթ Զալկալիանին առանձնապես ընդգծել է Վրաստանի օկուպացված շրջաններում մարդու իրավունքների պաշտպանության առումով ստեղծված ծանր իրավիճակը:

Բացի այդ, Դավիթ Զալկալիանու գնահատմամբ, Վրաստանի մասնակցությունը նշված բարձր մակարդակի հանդիպմանը հաստատում է Վրաստան-ԱՄՆ առանձնահատուկ գործընկերությունը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԼՔԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Բրիտանիան այլեւս Եվրամիության անդամ չէ: Հունվարի 31-ին, տեղական ժամանակով 23:00-ին, երկիրը պաշտոնապես լքեց միությունը:

Մեծ Բրիտանիան 47 տարի եղել է Եվրամիության կազմում:

Բրեքսիթից հետո, փետրվարի 1-ից սկսվել է 11-ամսյա անցողիկ ժամանակաշրջանը, որի ընթացքում Մեծ Բրիտանիան կենթարկվի Եվրամիության կանոններին, սակայն ներկայացված չի լինի կազմակերպության ինստիտուտներում:

ԱՄՆ ՍԵՆԱՏԸ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ԱՄՆ Սենատը Դոնալդ Թրամփին, իմպիչմենթի գործընթացի շրջանակներում, արդարացրեց երկու՝ իշխանության չարաշահման եւ կոնգրեսի կողմից անցկացվող հետաքննությունը խանգարելու հոդվածներով:

Դոնալդ Թրամփին իշխանության չարաշահման հոդվածով մեղավոր ճանաչելուն կողմ են քվեարկել ժողովրդավար բոլոր սենատորները, ինչպես նաեւ մեկ հանրապետական՝ Միթ Ռոմնին:

Ինչ վերաբերում է երկրորդ մեղադրանքին՝ կոնգրեսի հետաքննությանը խանգարելուն, այստեղ ձայները բաշխվել են կուսակցական ձեւով. 53 սենատոր նախագահին անմեղ է ճանաչել, 47-ը՝ մեղավոր:

Որպեսզի Սենատը Դոնալդ Թրամփին մեղավոր ճանաչեր, անհրաժեշտ էր ձայների մեկ երրորդը՝ առնվազն 67 ձայն:

ԻՐԱՆ 80000 ԴՈԼԱՐ՝ ԱՎԻԱԱՂԵՏԻ ԶՈՀԵՐԻՆ

Իրանի իշխանությունը, «Ուկրաինայի միջազգային ավիագծեր» ինքնաթիռի կործանման արդյունքում զոհված ուկրաինացի քաղաքացիների ընտանիքների փոխհատուցման կարգով, առաջարկել է 80 հազար ԱՄՆ դոլար: Այդ մասին հեռուստատեսության եթերում հայտարարել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին: Նրա խոսքով, ուկրաինական կողմն այդ գումարը բավարար չի համարում: Նա նշել է, որ ուկրաինական կողմը պահանջում է սեւ արկղերի հանձնումը:

ՍԻՐԻԱ ՀՐԹԻՌԱԿՈԾՎԵԼ ԵՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ

Սիրիայի հյուսիսում, Իդլիբի նահանգում, թուրքական զորամիավորումները հրթիռակոծվել են Սիրիայի բանակի կողմից: Զոհվել է 4 զինծառայող, 9-ը՝ վիրավորվել: Թուրքիայի պաշտպանության նախարարության տեղեկատվությամբ, սիրիական կողմը զգուշացված էր թուրք զինվորների գտնվելու հարցում:

ԹՈՒՐՔԻԱ ՃՆԱՀՈՍՔ ԶՈՀԵՐՈՎ՝ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԱՎԻԱՎԹԱՐ՝ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Թուրքիայի Վանի նահանգում ծնահոսքի հետեւանքով մահացածների թիվը հասել է 39-ի: Վիրավորվել է 84 մարդ: Մահացածների թվում կան իրավապահներ եւ փրկարարներ: Փրկարարական աշխատանքները դեռեւս շարունակվում են:

Փետրվարի 6-ին Ստամբուլի «Սաբիհա Գոքչեն» միջազգային օդանավակայանում, ուղեւորատար ինքնաթիռի վթարային վայրէջքի հետեւանքով, զոհվել է 3 մարդ եւ տուժել՝ 180-ը:

Տեղի ունեցածի պատճառ նշվում է վատ եղանակը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

էր ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների եւ մարդու իրավունքների գրասենյակ (ODIHR): Օրերս այդ գրասենյակից ստացված եզրակացությունը, ըստ որի ընտրական համակարգը պետության ինքնիշխան որոշումն է, երկու սկզբունքներն էլ, մեծամասնականը եւ համամասնականը, ինչպես նաեւ դրանց համադրությամբ ստացված խառը համակարգը օրինական ընտրություն է:

Մեկնաբանելով «ODIHR»-ի եզրակացությունը՝ «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ երկու ուղերձ է առանձնացվում «ODIHR»-ի եզրահանգումից: Մասնավորապես, Կոբախիձեի հայտարարությամբ, «ODIHR»-ի եզրահանգման մեջ հստակ նշված է, որ արդար են ինչպես համամասնական, այնպես էլ՝ մեծամասնական ու խառը ընտրական համակարգերը, բացի այդ, չկա ակնարկ, որ ընտրական տարվա ընթացքում ընտրական համակարգը պետք է փոփոխվի:

Իրակլի Կոբախիձեի կարծիքով, հավասարապես օրինական է ոչ միայն կառավարող կուսակցության կողմից ընդդիմությանն առաջարկված 100/50 համակարգը, այլեւ այսօր գործող խառը համակարգը:

Իսկ ինչ վերաբերում է 2020 թվականի խորհրդարանական ընտրություններին, ապա Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ այդ ընտրություններին «Վրացական երազանք» կուսակցությունը կներկայանա նորացված կազմով եւ նվազագույնը յուրաքանչյուր երկրորդ ձայնը ստանալու նվազագույն ծրագրով:

- Մենք կենտրոնացված ենք նորացման վրա, եւ թիմն անպայման կներկայանա նոր տեսքով: Ծրագրի նվազագույնը՝ յուրաքանչյուր երկրորդ ձայն ստանալն է: Որքան շատ ձայն, այնքան լավ,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Իսկ միացյալ ընդդիմությունն ընտրական օրինանախագծի իր տարբերակի պաշտպանության նպատակով կրկին ձեռնամուխ եղավ խորհրդարանի շենքի արգելափակման գործողությունների: Ընդդիմության ղեկավարների խոսքով, բողոքի գործողությունները պարբերական բնույթ կկրեն եւ չեն ընդհատվի մինչեւ կառավարող թիմը զիջումների չդիմի:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ ԵՆ ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարության միջավայրի հսկողության վարչության աշխատակիցները 2020 թվականի հունվարի 1-ից մինչեւ 31-ը ներառյալ բացահայտվել է ապօրինի ծառահատման եւ փոխադրման 309 դեպք: Բացահայտված փաստերն ընդգրկում են 6 քրեական գործեր:

Ապօրինի ծառահատման եւ փոխադրման ամենաշատ՝ 130 փաստ է բացահայտվել Կախեթիի շրջանային վարչության տարածքում: Աջարիայում գրանցվել է իրավախախտման 65, Իմերեթիում՝ 34, Քվեմո Քարթլիում՝ 29, Սամցխե-Ջավախեթիում՝ 18, Սամեգրելո-Զեմո Սվանեթիայում՝13, Շիդա Քարթլիում եւ Մցխեթա Մթիանեթիում՝ 7-ական, Ռաճա-Լեչխումիի Քվեմո Սվանեթիայում՝ 4, Գուրիայում՝ 2 փաստ: Ընդհանուր առմամբ, առգրավվել է 450 խորանարդ մետր անտառանյութ:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՔ

ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ

Նինոծմինդայում, համանուն մունիցիպալիտետի կենտրոնում, Վրաստանի արդարադատության նախարարության նախաձեռնությամբ կառուցվում է արդարադատության տուն:



Ենթակառուցի շինարարական աշխատանքներն սկսվել են 2019 թվականի դեկտեմբերի 10-ին: Նախագծի համաձայն, հենակետերի կառուցումը նախատեսված է ավարտին հասցնել 2020 թվականի հուլիսի 31-ին: Շինարարության համար կծախսվի 855 հազար 412 լարի:

Նինոծմինդայի քաղաքապետարանի դիմաց կառուցվող շինությունը կլինի ապակե, միահարկ, կկատարի արդարադատության տան գործառույթները: Տեղի բնակիչներին մեկ պատուհանի սկզբունքով հասանելի կդառնա ավելի քան 200 պետական եւ մասնավոր ծառայությունից օգտվելու հնարավորություն: Հաճախորդը կկարողանա ձեռք բերել անձնագիր/նույնականացման քարտ, գրանցել անշարժ գույք, կազմել կադաստրային պլան կամ արխիվային պահպանում:

Կենտրոնի ենթակառուցվածքները հարմարեցված կլինեն հաշմանդամ անձանց համար: Շենքի ներսում կգործեն MagtiCom-ի եւ Liberty Bank-ի մասնաճյուղերը, վերջինս թոշակառուներին հնարավորություն կտա տեղում կենսաթոշակ ստանալ:

Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ, նմանատիպ կենտրոններ Վրաստանի մարզերում կառուցվում են 2012 թվականից: Ծրագրի նպատակն է ընդլայնել տեղի բնակիչների համար կոմունալ ծառայությունների հասանելիությունը: Ներկայումս երկրի տարածքում գործում է ժամանակակից չափանիշներով 75 հանրային կենտրոն: Մինչեւ տարեվերջ բացվելու է եւս 10-ը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՌԱՁԱՆԳ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴԵՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՀԱՍՏԱՏԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ

Փետրվարի 4-ին Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ այսօրվանից Վրաստանում հնարավոր է հաստատել կորոնավիրուսի առկայությունը:

Նրա խոսքով, վրացական կողմը բանակցություններ է վարել գործընկերների հետ, որից հետո որոշվել է, Վրաստանը կստանա համապատասխան թեստեր, որոնց միջոցով հնարավոր կլինի կորոնավիրուսի առկայության հաստատումը Վրաստանում:

Գործող փորձով, հիվանդի կենսաբանական նյութը դեռ հետազոտում են Լուգարի լաբորատորիայում, որտեղ տեղի է ունենում մի քանի վարակի վրա հետազոտություն, որոնց թվում նոր կորոնավիրուսը չկա: Այն դեպքում, եթե այդ վարակները չեն հայտնաբերվում, նյութերն ուղարկում են արտասահման, որտեղ պատասխանները հայտնի են դառնում մի քանի օրից:

Այսօրվանից, նյութերը արտասահման չեն ուղարկվի եւ կուսումնասիրվեն տեղում:

Դրա հետ մեկտեղ, ինչպես հայտարարել է Ամիրան Գամղրելիձեն, այս պահին Վրաստանում կորոնավիրուս չի հաստատվել:

Ինչ վերաբերում է այդ վտանգավոր վարակի տարածման վիճակագրությանը, ապա, ներկա դրությամբ, Չինաստանում նոր տիպի կորոնավիրուսով վարակված մարդկանց թիվը հասնում է 28 հազարի, մահացածների թիվը՝ 636: Չինաստանի իշխանությունների տվյալներով, 186 000 մարդ երկրում գտնվում է կարանտինի մեջ: Դրան զուգընթաց, տեղեկատվություն է տարածվել նաեւ առողջացման դեպքերի վերաբերյալ: Մասնավորապես, նշված է, որ լրիվությամբ բուժվել է 1540 մարդ:

Բացի Չինաստանից, ավելի քան 25 երկրում հայտնաբերվել է նոր տեսակի կորոնավիրուսի ավելի քան 200 դեպք:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հաստատում է, որ կորոնավիրուսի բուժման նոր մեթոդ դեռ չի հայտնաբերվել:



ԳՆԱՑՔ՝ ԹԲԻԼԻՍԻ-ՔՈՒԹԱՅԻՍԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավայի տեղեկատվությամբ, կառավարությունը հաստատել է Քութայիսիի միջազգային օդանավակայանը եւ Վրաստանի երկաթգիծը կապելու վերաբերյալ նախագիծը:

Նրա պարզաբանմամբ, կսկսի գործել Քութայիսիում տեղակայված Կոպիտնարի երկաթգիծը, որտեղ Թբիլիսիից հնարավոր կլինի տեղափոխվել մինչեւ Կոպիտնարի կայարան, իսկ այնտեղից՝ հատուկ վագոններով մինչեւ օդանավակայան:

Նախարարի խոսքով, նախագծում երեք գերատեսչություն է ներգրավված: Մասնավորապես, Վրաստանի երկաթգիծը կիրականացնի Կոպիտնարիի կայարանի վերանորոգումը, ճանապարհային դեպարտամենտը՝ կայարանն ու օդանավակայանը կապող ճանապարհը, իսկ օդանավակայանների միավորումը կիրականացնի հատուկ վագոններով ավիաուղեւորների անվճար ծառայությունը:

Կոպիտնարիի կայարանից մինչեւ օդանավակայան 1,5 կմ է:

Հիշեցնենք՝ սա առաջին դեպքը չէ, երբ այս հարցը բարձրացնում է Վրաստանի կառավարությունը: 2017 թվականին Վրաստանի այն ժամանակվա վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարել էր, որ մեկ տարում նախագիծը կիրականացվի, հարցը դրանից հետո չէր բարձրաձայնվել:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ

Վրաստանի կառավարության կողմից ընդունված հրամանագրով, պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի զորակոչը, որը սկսվել էր փետրվարի 3-ին, կտեւի մինչեւ հունիսի 30-ը:

Պաշտպանության ուժեր զորակոչելու առավելագույն քանակը սահմանվել է 1400, արդարադատության նախարարության ենթակայության մեջ գտնվող կառույցներում՝ 1328, ՆԳՆ-ն զինվորացված ստորաբաժանումներում՝ 950, պետական անվտանգության ծառայությունում ծառայելու է 311 նորակոչիկ, իսկ Վրաստանի պետական պահպանության հատուկ ծառայությունում՝ 200 նորակոչիկ:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվում են 18-ից 27 տարեկան քաղաքացիները:

Պարտադիր զինվորական ծառայություն զորակոչվելու գործընթացը համակարգում է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարությունը:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊ

Չորս մանկահասակ երեխա եւ երկու կին հրդեհի զոհ են դարձել Քութայիսիի (Իմերեթիի տարածաշրջան) մերձակա Բաղդատի գյուղում:

Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, հրդեհը բռնկել էր բնակելի փայտաշեն տանը: Կրակը տարածվել է 200 քառակուսի մետրի վրա: Այրվող տուն մտած փրկարարները հրդեհը տեղափակելուց հետո գտել եւ դուրս են բերել հինգ դիակ՝ չորս անչափահաս եւ մեկ կին: Ավելի ուշ, գտնվել է տարեց կնոջ մարմինը: Կատարվում է հետաքննություն:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ Է ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՆՈՒՄ Է ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԳԾՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի կառավարության ռազմավարությունն ու առաջնահերթությունները, իրականացվող նախագծերն ու հանձնառությունները: Պետնախարարի հավաստմամբ, ազգային փոքրամասնություններին հանրային-հասարակական տարաբնույթ ոլորտներում ներգրավման առումով առկա է զգալի առաջընթաց: Նրա խոսքով, վրաց-հայկական սերտ հարաբերությունները ոչ միայն աշխարհագրությամբ են պայմանավորված, այլեւ պատմական, մշակութային բազմաթիվ առանձնահատկություններով: Ք.Ցիխելաշվիլին ընդգծեց, որ վրացիներն ու հայերը ապրում են խաղաղ համակեցությամբ: Ըստ պետնախարարի, Վրաստանի կառավարության համար կարեւոր է ինչպես այլ ազգությունների լիարժեք ինտեգրումը, այնպես էլ՝ ազգային ինքնության պահպանման խրախուսումը: Այս համատեքստում հատկապես կարեւորվեց էթնիկ լեզվի ուսուցման շարունակականության ապահովումը, ինչպես նաեւ պետական լեզվի իմացության մակարդակի բարելավումը: Հանդիպմանը պետնախարարը շեշտեց,

Հանդիպում ԱԳՆ-ում

որ հայերի շրջանում ազգային լեզվի պահպանմանը մեծապես նպաստում է նաեւ Վրաստանում գործող հայալեզու մեդիան:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Զարեհ Սինանյանը նշեց, որ Վրաստանի հայ համայնքը յուրահատուկ է եւ մյուս համայնքներից առանձնանում է իր պատմական հետագծով: Հանձնակատարն ընդգծեց, որ մեզ համար կարեւոր է հայերի լիակատար ներգրավվածությունը բնակության երկրների հասարակություններին ու հանրային կյանքի տարբեր բնագավառներին՝ միեւնույն ժամանակ պահպանելով հայ ինքնությունն ու մշակույթը: Զարեհ Սինանյանը պետնախարարին ներկայացրեց նաեւ գրասենյակի գործունեությունն ու ծրագրերը Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում:

Հանդիպմանը քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, պատրաստակամություն հայտնվեց շարունակել համագործակցությունը նաեւ հետագայում:

Աշխատանքային այցի շրջանակներում, Զարեհ Սինանյանը հանդիպում ունեցավ նաեւ Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Լաշա Դարսալիայի հետ:

Երկուստեք կարեւորվեցին վրաց-հայկական բարեկամական հարաբերությունները, զարգացման հեռանկարները: Զարեհ Սինանյանը նշեց, որ Վրաստանի հայ համայնքի հետ աշխատանքում իր գրասենյակը կարեւորում է ինքնության պահպանումն ու երկրի հասարակական կյանքի տարբեր ոլորտներին հայ բնակչության լիարժեք ինտեգրումը, հանրային ակտիվության մակարդակի բարձրացումը: Հանդիպման ավարտին քննարկվեցին համագործակցության հնարավոր ուղղությունները:

Քեթեւան Ցիխելաշվիլին եւ Լաշա Դարսալիայի հետ հանդիպմանը մասնակցեցին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանն ու ՀՀ գլխավոր հանձնակատարի գրասենյակի վարչության պետ Հայկ Ենգիբարյանը:

Խոջիվանքի պանթեոնում

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանի ուղեկցությամբ, այցելեց Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, հարգանքի տուրք մատուցեց պանթեոնում հանգչող մեծերի հիշատակին:

Պանթեոնում Վրաստանում Հայաստանի դեսպանատան մամլո պատասխանատու Հարություն Հայրապետյանը Զարեհ Սինանյանին ցույց տվեց վերջերս հայ համայնքի ներկայացուցիչների կողմից Թբիլիսիի կենտրոնական փողոցների վերանորոգման ընթացքում հայտնաբերված եւ ոչնչացումից փրկված, պանթեոն տեղափոխած հայկական գրառումներով տապանաքարերը:

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԸ ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԵԾ ԳՈՐԾ Է ԱՆՈՒՄ

Աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը փետրվարի 3-ին այցելեց «Վրաստան» թերթի խմբագրություն:

Հանդիպմանը թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը հանձնակատարին ներկայացրեց պարբերականի գործունեությունը, որի հիմնադրման 100-ամյակը կլրանա այս տարվա դեկտեմբերին: Զարեհ Սինանյանը բարձր գնահատեց թերթի առաքելությունն ու գործունեությունը՝ կարեւորելով նրա դերը հայապահպանության գործում: Խոսելով խմբագրություն եւ Թբիլիսի այցի մասին Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը «Վրաստան» թերթի հետ կիսվեց իր տպավորություններով:

- Վրաստանի ամենաերկարակյաց թերթն այս տարի իր հարյուրամյակն է տոնում՝ վկան դառնալով Թբիլիսիում հայ մամուլի հարուստ ու բեղմնավոր պատմության: Մենք ուրախ ենք, որ պարբերականը շարունակում է իր առաքելությունը, շարունակում է հայ ընթերցողին հայերենով լուրեր մատուցել եւ կապ հանդիսանալ ոչ միայն հայ-վրացական իրականության, այլեւ հայ ընթերցողի եւ նրա Պատմական Հայրենիքի միջեւ: Ողջունելի է, որ իր այդ առաքելության կարեւորությունը «Վրաստան» թերթն ամենեւին չի կորցրել, եւ ընդհակառակը, այժմ առավել քան կարեւոր է նրա գոյությունը: Բարի երթ եմ մաղթում մեր հայատառ թերթին, հաջողություններ, երկարակեցություն ու բազում ընթերցողներ, նաեւ հետաքրքիր ձեւաչափեր, որպեսզի անկախ պատմության վայրիվերումներից ու տեխնոլոգիաների փոփոխություններից, «Վրաստան» թերթը մնա կարեւոր ու պահանջված մեր համայնքի համար:

Տպավորություններս շատ բուռն են, որովհետեւ Թբիլիսիի հայ համայնքը շատ հարուստ ու երկար պատմություն ունի՝ մեծ դեր խաղալով այսօրվա Հայաստանի հանրապետության ձեւավորման ու կայացման մեջ: Որովհետեւ ժամանակին հայկական մտավոր, գիտական, կրթական ու ինտելեկտուալ ողջ ներուժը կուտակվել էր հենց Թիֆլիսում: Եվ դա հիմք հանդիսացավ, որպեսզի հետագայում հնարավոր լիներ մեծ պաշարով մեկնել, վերադառնալ Հայաստան, մեր հողի Արեւելյան մաս, եւ փրկել, կերտել ներկայիս Հայաստանի Հանրապետությունը: Եվ ահա այսօր, ես երբեմնի այդ հզոր համայնքի հետնորդների հետ եմ առնչվում: Ծանոթանում եմ նրանց կենցաղին, ամենօրյա խնդիրներին: Իհարկե, խնդիրներ կան, եւ մենք պետք է համբերությամբ լցվենք ու մեր հայրենակիցների, վրաց բարեկամների հետ համատեղ փորձենք լուծում տալ այդ հարցերին:

- Ինչ վերաբերում է Սփյուռքի նոր գրասենյակի հետագա գործունեությանը,- նշեց պարոն Սինանյանը,- ապա ասեմ, որ այն կտրուկ տարբերվելու է նախորդից: Ի թիվս մյուսների ունենք նաեւ հայրենադարձության գլոբալ ծրագիր, եւ դա յուրաքանչյուր համայնքում տարբեր կերպ ու ժամանակահատվածներում է դրսեւորվելու, տարբեր անհատների կողմից այլ կերպ ընկալվելու, հետեւաբար՝ մատուցվելու: Ընդհանուր առմամբ, սա հայահավաքության մեր հիմնանպատակին է ծառայելու: Մենք մեր ուժերի ներածին չափ սատարելու ենք նաեւ նրանց, ովքեր շարունակելու են ապրել ու արարել իրենց ծննդավայրերում՝ պահելով Սփյուռքը: Այժմ արդեն շատ ավելի փոքր մարդկային ռեսուրսով, Սփյուռքի հարցերով գրասենյակը կոնկրետ օրակարգ ունի, ուր առաջնայինը Սփյուռքի ինտեգրումն է Հայաստանին: Խոսքն այն մասին է, որ Սփյուռքն՝ ի շահ Հայաստանի եւ Հայաստանն ի շահ Սփյուռքի օգտագործենք: Սա մեր պետական տեսլականն է ու նպատակը: Անցյալում այս օրակարգը չկար, եւ ժամանակ է հարկավոր այս ամենին ընթացք տալու համար: Այս առանցքում Վրաստանն ամենամոտն է, ինքնաթիռով մոտ կես ժամ ճանապարհ է մեզ բաժանում: Այնպես որ, լիահույս եմ, Վրաստանի հետ կապը ամենամատչելին ու հաճախակին է լինելու:

«ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԸ ԳԵՂԵՑԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ԼԻՆԵԼՈՒ»

Աշխատանքային այցի շրջանակներում, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը եղավ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շինհրապարակում: Դիմավորելով հյուրերին՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը Զարեհ Սինանյանին եւ ուղեկիցներին առաջարկեց շրջայց կատարել շինհրապարակում,

Թատրոնի շինհրապարակում

ծանոթանալ կառուցվող բեմին եւ դահլիճին: Արմեն Բայանդուրյանը տեղեկացրեց, որ շենքի դրսի աշխատանքներն ավարտված են: Ծրագրված է շենքը շահագործման հանձնել ընթացիկ տարվա նոյեմբերին:

Զարեհ Սինանյանը նշեց, որ ուրախ է տեսնել հայ համայնքի լիարժեք կյանքն ու կապվածությունը մշակույթին, միաժամանակ պատրաստակամություն հայտնեց աջակցել ծագող խնդիրների լուծման գործում:

Զարեհ Սինանյանը հույս հայտնեց, որ թատրոնի շենքի շինարարությունը կավարտվի սահմանված ժամկետներում, եւ հարուստ պատմություն ունեցող թբիլիսյան թատրոնը իր ներկայացումներով հանդիսատեսին կուրախացնի նոր, գեղեցիկ շենքում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 3-ին Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը Թբիլիսիի «Հայարտուն»

Հանդիպում հայ համայնքի հետ

կրթամշակութային կենտրոնում հանդիպում ունեցավ մայրաքաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ողջունելով ներկաներին՝ Զարեհ Սինանյանը խոսեց Հայաստան-Սփյուռք գործակցության ուղղությունների եւ առաջնահերթությունների մասին, նշեց, որ այսօր կերտվում է մարդակենտրոն Հայաստանի Հանրապետությունը, որը պետք է ծառայի իր քաղաքացիներին, հիմնված լինի արդարության, հավասարության, ճշմարտության գաղափարների վրա: Անդրադարձ կատարելով վիրահայ համայնքին՝ հանձնակատարը շեշտեց, որ, տարաբնույթ դժվարություններով հանդերձ, համայնքն ամեն ինչ անում է հայի ինքնությունը պահպանելու համար: Հայերը, լինելով Վրաստանի լավ քաղաքացիներ, նաեւ շարունակում են լավ մարդիկ մնալ: Զարեհ Սինանյանը խոսեց նաեւ համայնքային մի շարք խնդիրների եւ դրանց լուծման կարեւորության մասին:

Ավելի քան երկու ժամ տեւած հանդիպմանը մասնակիցները բազմաթիվ հարցեր ուղղեցին գլխավոր հանձնակատարին, որոնց գերակշիռ մասը վերաբերում էր հայապահպանությանը, հայոց լեզվի դասավանդմանը, մշակութային նախաձեռնություններին ու ծրագրերին, համայնքային կառույցների հետ աշխատանքի առանձնահատկություններին, հայրենադարձությանը, գրասենյակի 2020 թվականի ծրագրերին, փոխայցելություններին, հայ-վրացական միջպետական հարաբերություններում հայ համայնքի դերին:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)